



Australian Government



Ինչ ակնկալել COVID-19-ի դեմ պատվաստման օրը ձեր տարեցների բնակարանային խնամքի հաստատությունում

Տեղեկատվություն բնակիչների, ընտանիքների, խնամողների և հարազատների համար

Ավստրալիայի կառավարության ռազմավարությունն է COVID-19 պատվաստանյութեր մատակարարել Ավստրալիայում ապրող բոլոր բնակիչներին:

Տարեցների բնակարանային խնամքի աշխատողները և բնակիչները կլինեն առաջին մարդկանց շարքում, ովքեր կարող են COVID-19-ի դեմ պատվաստվել: Մա Ավստրալիայի COVID-19-ի դեմ պատվաստման մեկնարկի ազգային ռազմավարության [առաջին փուլի \(փուլ 1ա\) մասն է կազմում:](#)

COVID-19-ի դեմ պատվաստումը տարեցների բնակարանային խնամքի աշխատողների և բնակիչների համար կկատարվի տարեցների բնակարանային խնամքի հաստատություններում: Ձեր տարեցների բնակարանային խնամքի հաստատությունը ձեզ կտեղեկացնի, թե երբ է ձեր պատվաստման օրը:

Այս փաստաթուղթը տեղեկատվություն է տրամադրում ձեզ, ձեր ընտանիքին, խնամակալներին և հարազատներին այն մասին, թե ինչ կարող եք ակնկալել, մինչև պատվաստումը և ձեր պատվաստման օրը:

Մինչև պատվաստման օրը

- Ավստրալիայի կառավարությունը կկազմակերպի պատվաստանյութերի առաքում ձեր տարեցների բնակարանային խնամքի հաստատություն:
- Ավստրալիայի կառավարությունը նաև հավաքագրել է կլինիկական աշխատուժ, ովքեր կայցելեն ձեր տարեցների բնակարանային խնամքի հաստատություն և կպատվաստեն բնակիչներին և անձնակազմին: Այս կլինիկական աշխատողները ձեր հաստատության հետ կաշխատեն շատ սերտորեն՝ նախապատրաստելու պատվաստման օրվա համար՝ պլանավորելու եւ համոզվելու, որ պատվաստման օրը անցնի անվտանգ և արդյունավետ:
- Ձեր տարեցների բնակարանային խնամքի հաստատությունը կլինդրի ձեզ և ձեր փոխարինող որոշումներ կայացնողին (եթե այդպիսին կա), համաձայնություն տալ՝ COVID-19-ի դեմ պատվաստվելու համար:
 - Տեղեկատվությունը հասանելի է ձեզ համար, որպեսզի կարողանաք տեղեկացված որոշում կայացնել COVID-19-ի դեմ պատվաստման մասին: Եթե ձեր հաստատությունը ձեզ դեռ չի տրամադրել այս տեղեկատվությունը, դուք կարող եք գտնել դրա օրինակը [Առողջապահության նախարարության կայքում](#):
 - Նախքան համաձայնություն տալը՝ դուք, ձեր ընտանիքը, խնամակալները և որոշումներ կայացնողները կարող եք նաև դիմել ձեր հաստատության կլինիկական անձնակազմին, բժշկին կամ այլ առողջապահական մասնագետներին՝ քննարկելու պատվաստման օգուտներն ու ռիսկերը և, թե արդյոք հարմար է, որ դուք COVID-19-ի դեմ պատվաստվեք:
- Ձեր հաստատության կլինիկական անձնակազմը կստուգի ձեր առողջությունը, որպեսզի համոզվի, որ ձեզ հարմար է պատվաստվում ստանալը: Եթե ձեր հաստատությունը ունենա որևէ մտահոգություն ձեր առողջության մասին, նրանք կխորհրդակցեն բժշկի հետ: Դուք նույնպես կարող եք զրուցել ձեր բուժող բժշկի հետ ցանկացած ժամանակ ձեր առողջության և COVID-19-ի դեմ պատվաստման մասին:
- Եթե համաձայնություն տաք COVID-19-ի դեմ պատվաստվելու համար, ձեր տարեցների բնակարանային խնամքի հաստատությունը կգրանցի ձեզ պատվաստում ստանալու համար: Ձեր հաստատությունը կկառավարի պատվաստման օրվա բոլոր կարգադրությունները պատվաստման աշխատուժի հետ:
- Անհրաժեշտություն չկա, որ COVID-ի դեմ պատվաստումը նշանակվի ձեր բուժող բժշկի կողմից:
- Դուք իրավունք ունեք օգտվել տարեցների խնամքի փաստաբանի ծառայությունից: Այս ծառայությունը OPAN-ի միջոցով անվճար է, գաղտնի և անկախ կառավարությունից և տարեցների խնամք տրամադրողներից: Տարեցների խնամքի փաստաբանները ձեր նահանգում կամ տարածքում հասանելի են 1800 700 600 հեռախոսահամարով կամ opan.com.au կայքի միջոցով:

Պատվաստման օրը

- Եթե դուք մտադիր եք պատվաստվել, ձեր հաստատության կլինիկական անձնակազմը կստուգի, որպեսզի համոզվի, որ դուք լավ եք ձեզ զգում պատվաստման օրը: Եթե դուք ունենաք առողջական խնդիր պատվաստման օրը, ձեր տարեցների բնակարանային խնամքի հաստատությունը կխորհրդակցի բժշկի հետ՝ որոշելու, թե արդյոք ձեր պատվաստումը կարող է տեղի ունենալ, կամ եթե այն պետք է հետաձգվի մինչև ավելի ուշ ժամկետ:
- Ձեզ աջակցող որևէ անձ կարող է ներկա գտնվել ձեր տարեցների բնակարանային խնամքի հաստատությունում պատվաստման օրը՝ օգնելու և աջակցելու ձեզ: Մա կարող է լինել որևէ մեկը, ով կարող է թարգմանել տեղեկատվությունը կամ հանգստացնել ձեզ, եթե դուք մտահոգություն ունենաք:
- Ինչպես ցանկացած պատվաստանյութի դեպքում՝ դուք կարող եք ունենալ որոշ կողմնակի ազդեցություններ COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո: Տեղեկատվություն, թե ինչ պետք է ակնկալել պատվաստումից հետո, կտրամադրվի ձեզ կլինիկական աշխատողի կողմից, ով կկատարի պատվաստումը: Այս տեղեկատվությունը հասանելի է նաև [Առողջապահության նախարարության կայքում](#):
- Ձեր պատվաստումից հետո ձեր տարեցների բնակարանային խնամքի հաստատության անձնակազմը ձեզ սերտորեն կհսկի: Եթե դուք վատ զգաք պատվաստումից հետո, անպայման նրանց տեղյակ պահեք:

Մնացեք տեղեկացված վստահելի տեղեկատվության միջոցով

Դուք կարող եք գտնել լրացուցիչ տեղեկատվություն, ներառյալ՝ թարգմանված տեղեկատվություն, առողջապահության նախարարության [COVID-19 պատվաստանյութերի վերաբերյալ կայքում](#): Դուք կարող եք նաև բաժանորդագրվել և ստանալ [COVID-19 պատվաստանյութերի մասին թարմացված տեղեկատվություն](#):

Դուք կարող եք նաև զանգահարել Ազգային կորոնավիրուսի օգնության գիծ 1800 020 080 հեռախոսահամարով և անհրաժեշտության դեպքում խնդրել թարգմանիչ:

[Տարեցների շահերի պաշտպանության ցանցը \(OPAN\)](#) հասանելի է, եթե ցանկանում եք խոսել COVID-19-ի հետ կապված ցանկացած հարցի կամ մտահոգությունների մասին, կամ եթե ձեզ անհրաժեշտ է կապվել ձեր տարեցների խնամք տրամադրողի հետ: Զանգահարեք 1800 237 981 հեռախոսահամարով առավոտյան ժամը 6-ից մինչև երեկոյան ժամը 10-ը (AEDT), շաբաթը 7 օր կամ կապվեք էլեկտրոնային փոստով՝ covid@opan.com.au